ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-26/14 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 04.03.2026թ. ժամը 10:00-ին Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝	Անգելինա Հովհաննիսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝	Ռուզաննա Համբարձումյան /գնահատող/
	Ամալյա Քոչարյան /բացող/
	Կարինե Սիմոնյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Հերմինե Ալոյան
Բացակայում էր՝	Արմենուհի Ղևոնդյան /գնահատող/

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-26/14 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-26/14 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումը
1	«Աութսորս» ՍՊԸ

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Մասնակիցների առաջարկած գինը.

4.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չափաբաժին	Գնման գինը ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումը	
		«Աութսորս» ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ	
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	33000000	26190000	31428000

5. Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

5.1 Մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.2 կետի սահմանված ժամկետում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 310 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 20.03.2026թ. ժամը 10:10-ին

Բացակայում էր՝ Արմենուհի Ղևոնդյանը

6. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 «Աութսորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, իսկ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

6.1.1.Բացակայում է Հրավերի I-ին մասի 2.4 կետով «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի գնահատման համար պահանջվող փաստաթղթերը,

6.1.2.Հավելված 1.1՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տեղեկանքում ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ հրավերի պահանջներին չեն համապատասխանում ներկայացված մասնագետների գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը, ինչպես նաև ժամանակահատվածը,

6.1.3.Հրավերի I-ին մասի 2.4 կետով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի գնահատման համար ներկայացված փաստաթղթերը թերի են, մասնավորապես՝ ներկայացվել են ոչ բոլոր մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև ոչ բոլոր մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Աութսորս» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.1 կետում արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը շարունակել մասնակցի կողմից անհամապատասխանությունները շտկելուց հետո բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.9 կետի սահմանված ժամկետում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 310 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 26.03.2026թ. ժամը 11:10-ին

Բացակայում էր՝ Արմենուհի Ղևոնդյանը

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 «Աութսորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը անհամապատասխանությունները շտկելուց հետո կրկին չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ ներկայացված է նոր տեղեկանք՝ առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ, որում ներկայացված տեղեկատվությունը կրկին չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

8.1.1. Բացակայում է աշխատակազմում ներառված Միեր Հովհաննիսյանի որակավորումը հավաստող փաստաթուղթը,

8.1.2. Տեղեկանքի 1-7-րդ կետերով ներկայացված մասնակիցների աշխատանքային փորձի ժամանակահատվածը ներկայացված է ընդհանրական ձևով, այն դեպքում, երբ գործատուները մի քանիսն են և հասկանալի չէ, թե որ գործատուի մոտ ի՞նչ ժամկետով և ո՞ր ոլորտում է իրականացրել կատարած աշխատանքը, քանի որ որպես գործունեության ոլորտ ներկայացվել է ոչ միայն հրավերով սահմանված ոլորտը, այլ նաև այլ ոլորտ, որը նախատեսված չի եղել հրավերով, հետևաբար հստակ չէ, արդյո՞ք ներկայացված մասնագետների կատարված աշխատանքները իրականացվել են պահանջվող ոլորտում և ժամանակահատվածում:

8.1.3. Աննա Հարությունյանի, էվելինա Մանգասարյանի և Զաքարիա (Տիգրան) ծ. Վրդ. Բաղումյանի համար լրացված չէ գործունեության ոլորտը, իսկ կատարված աշխատանքը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9. Տվյալներ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակցի վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 8.1 կետը՝ **«Աութսորս» ՍՊԸ -ի** հայտը գնահատել անբավարար և մերժել հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10. Գնահատման արդյունքների մասին.

10.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարել չկայացած՝ հայտերից ոչ մեկը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10.2 Հրապարակել գնման ընթացակարգի չկայացման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն անգործության ժամկետ սահմանել ընթացակարգի չկայացման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10.3 Հիմք ընդունելով « Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 29-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը պատվիրատուի ղեկավարին ներկայացնել «Աութսորս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծը:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Անգելինա Հովհաննիսյան /նախագահ/

---------- Ռուզաննա Համբարձումյան

---------- Ամալյա Քոչարյան

---------- Կարինե Սիմոնյան

---------- Հերմինե Ալոյան/քարտուղար/